№ 121 Յուլիսի 3 (15) 1881 Յուլիսի 3 (15) № 121

ՏԱՍՆԵՕՐԵԱՅ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միջնայն ամրոցքաղաքի մէջ։

Յատուկ թղթակիցներ չունի ամ գրվում։ Տիֆլիս. Редакція «Мшакъ»

Ամրագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն ժամով։

Յայտարարութիւնների համար վճարում են հրատարակիչ տան 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ Մի կարեւոր առաջարկութիւն, որ թերի մի նոր հիւանդութիւն նամակ շուչուց՝ Ներքին լուրեր՝ —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ Թիւրքիա, Ֆրանսիա, Իտալիա՝— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ՝ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝ Թիւրքաց Հայաստան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Յաւալի իրողութիւն է, ի հարկէ, որ կ. Պոլսի ազգային ժողովը մերժել է Դիւլօրիէի առաջարկութիւնը փարիզում մի Ֆրանսիական օրգան հիմնելու մասին մեր ազգային շահերին ծառայելու նպատակով։ Ի նկատի ունենալով այն մեծ դերը, որ խաղում է եւրոպական մամուլը քաղաքական ասպարիզում, շատ պարզ է, թէ որ աստիճան մեծ նշանակութիւն կունենար մի այդպիսի թերթ հայոց հարցի համար ներկայ ժամանակամիջոցում, առաւել ևս հրատարակված մի այդպիսի հմուտ և գիտնական մարդու խմբագրութեամբ, ինչպէս, անկասկած, Լիշեալ Ֆրանսիացի հրապարակախօսն է։ Հայոց հարցը իր լուծման շրջանի մէջն է և իսկ այդ պատճառով, կարծում եմ, որ թէ բոլոր ուրուաց հայերը և թէ կ. Պոլսի հայոց ազգաբնակութիւնը,—որը արդէն չէ կարող չը հասկացած լինել իր տխուր սխալմունքը,—մեծ համակրութեամբ կընդունէն „Մշակի“ առաջարկութիւնը՝ նոյնից խնդրել Դիւլօրիէին հիմնել իր մասնաձած թերթը։ Այդ կարելի բան է, բայց դորա համար ժամանակ է հարկաւոր, որ այդպիսի մի նոր լրագիր կարողանայ իր տարածութեամբ ցանկալի ազդեցութիւն ունենալ հայոց հարցի վրա, իսկ այս վերջինը սպասելու ժամանակ չունէ և հանդիսացած է եւրոպայի դիպլոմատիական հօրիզոնում, իբրև օրուայ հարց։ Իշխան Բիսմարկի կարծիքով, այդ հարցի վճռելը տարաժամ է, իսկ Գլադստօն, ինչպէս յայտնի է անգլիական պարլամենտում նրա ատենաձած խօսքերից, համարում է հայոց հարցը ամենագլխաւորը այն հարցերի շարքում, որոնցով հարկաւոր է զբաղվել փոքր Ասիայում։ Յայտնի է նոյնպէս, որ կ. Պոլսի ռուսաց դեսպանը, պ. Նօվիկով առաջարկել է Բ. Դրան մի նոր ծրագիր Հայաստանի բնիֆօրմների։ Չը գիտենք վերջինի փոքը, բայց բոլորովին ճիշտ է այն, որ հայոց հարցի վերաբերութեամբ եւրոպայի դիպլոմատիական շրջաններում կազմված են երկու իրար ընդդէմ կուսակցութիւններ. մէկը Գլադստօնինը—յօդուտ այդ հարցի, իսկ միւսը Բիսմարկինը—ի վնաս։ Այլ տէրութիւնների հայացքները դէպի այդ հարցը մեզ յայտնի չեն.—իսկ ունենք շատ այնպիսի փաստեր անցեալ ժամանակներից, որ կարող ենք ապահով համարել գոնէ Ֆրանսիայի և Իտալիայի համակրութիւնները դէպի հայոց ազգի բարեկեցութեան վիճակը։ Կար ժամանակ, որ այդ պետութիւնները ևս եղած էին գոհար գարշուրելի բարբարոսութիւնների, իսկ հիմայ ազատված հասարակական ճնշումներից, վայելում են օրինաւոր հանրապետական և սահմանադրական կեանք։

Ուրեմն դժուար չէ նախագուշակել որ հայոց հարցի բարեկամները եւրոպայում անհամեմատ աւելի շատ են, քան թէ թշնամիները. բայց հարկաւոր է նկատել, որ գլխաւոր թշնամին—իշխան Բիսմարկը շատ վտանգաւոր է, իսկ այդ պատճառով հայոց հարցին նպաստող փաստերը, իւրաքանչիւր դումարման մէջ, աւելի զօրեղ պիտի հանդիսանան, որ կարողանան յաղթել այդ պիտի մեծ և զօրեղ թշնամուն, ինչպէս Բիսմարկին է, իսկ ամենազօրեղ ոյժը եւրոպայի պետութիւններում հասարակական կարծիքն է։ Այդ կարծիքը կարող է լաւ վիճ դէպի հայոց հարցը լրագրական ներգործութեամբ, Անգլիայի և Ֆրանսիայի թերթերի միջոցով։ „Times“ լրագիրը, յայտնի է, թէ ինչ մեծ հեղինակութիւն ունի համարեա ամբողջ լուսաւորված աշխարհում։ Այդ լրագրի ծառայութիւնը հայոց հարցին ներկայ միջոցում կարող է անգին հետևանքներ ունենալ, նոյնը կարող է կատարել և փարիզի գլխաւոր լրագիրներից մէկը։ Այդպիսի լրագրական օրգանների ապագուցութեան տակ հասարակական կարծիքը ամբողջ եւրոպայում յօդուտ հայոց հարցի կարող է լարվել մինչև այն աստիճան, որ հայոց խնդիրը կամփոփէ իր մէջ արևելեան խնդրի բուն էութիւնը։

Ահա այդ նպատակով, իբրև հայերից մէկը, բարոյական պարտք եմ համարում հրապարակել հասարակութեան ուշադրութիւնը դէպի հետևեալ առաջարկութիւնը. արդիօք կարելի չէր լինի հիմնել առանձին հայոց բաժիններ յիշեալ լրագիրների մէջ հայոց խնդիրը պարզելու, նորա լուծման նպաստելու և նրան այն նշանակութիւնը տալու համար, որին նա արժանի է, բայց որից դեռ ևս դուրկ է, համարվելով երկրորդական հարցերի շարքում։ Այդ միջոցով կարող ենք ունենալ շատ բրայաններ և Դիւլօրիէներ, որոնք թէ պարլամենտներում, թէ այլ հասարակական ասպարէզներում կը տան հայոց հարցին նորան արժանաւոր նը շանակութիւնը, և թիւրքիայի գազանաբարոյ ինստինկտները կը մնան առանց հասնելու իրանց բարբարոսական նպատակներին։ Շատ կարելի է, որ պատճառներ լինեն այս առաջարկութիւնը հերքելու. այդ դէպքում ցանկալի կը լինէր իմանալ այդ պատճառները, իսկ եթէ արգելող հանգամանքներ էլ կան, չենք կարող ամբողջ սրտից չը ցանկալ որ շուտով հիմնվին հայոց բաժինները յիշեալ լրագիրների մէջ։ Թէ ինչ միջոցներով հարկաւոր է հասնել այդ կարևոր և օգտակար նպատակին—այդ թող որոշի մեր մամուլը։

Միքայէլ Աղաթէլեանց

ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

—

10.

Հայոց Զոր և Ոստան

Հայոց Զոր, Ոստան կամ Կեավաչ, առաջինը 4 ժամ, երկրորդը 6 ժամ հեռաւորութիւն ունի Վանից։ Լիւսիայից կողմից սահմանակից է Վանին, արևմուտքից եղերած է ծովով. հարաւային կողմից պարսպի պէս բարձրանում են Արտօս լեռները։ Հայոց Զորը մի հովիտ է, որի միջից անցնում է Խոշաբայ կամ Ալդզայ գետը և Շամիրամայ առուն։ Ոստան կամ Կեավաչ, հին Ռշտունիք, մասամբ դաշտային դիրք ունի, զարդարված պտղատու և անպտուղ ծառերով. օդը բարեխառն է, գաւառագլուխն է Նորգեղիխան։ Ազգային հին յիշատակներով լի է այս գաւառը։ Գիւղերը դեռ կրում են իրանց հին անունները, ինչպէս Հայք, Հայկաչէն։ Սա է Հայկայ ճակատամարտի ձորը։ Այստեղ են Աբրահամ խոստովանողի գերեզմանն ու վանքը, Վարդապատրիկի գիւղն ու գերեզմանը. Ոստանայ մէջն է Եղիշէի անշուք գերեզմանը. Դագկայ և Գուրգենայ բերդի աւերակները Ոստանայ ծովափին են, ուր քարերու վրա խոշոր տառերով դեռ կը կարդացվին նրանց անունները։ Դեռ ևս չէն մնում է Նարեկայ վանքը Նարեկ գիւղի մօտ, Արտօս լեռան ստորոտում։ Նարեկայ դէմուդէմ Աղթամար կըղզու վրա չինված է համանուն վանքը, ուր նստում է հայոց երրորդ կաթողիկոսը։ Վանքի չինվածքը մի հրաշալի ճարտարապետութիւն է, որ չատերը Տրդատ ճարտարապետի գործն են համարում.

Գիւղերի Թիւ	96
Հայոց Թիւ	18,830
Բղդեր	3,370
Վարժարաններ	11
Աշակերտներ	566
Վանքեր	14
Եկեղեցիներ	32

Վանքերից հեռու գտնված գիւղերի բնակիչները լաւ հայեր են։ Կիմ գիւղի մէջ կ. Պոլսոյ Երկրագործական ընկ. մի ուսումնարան է բացած։

11.

Խիզան, Կեցան, Գեաւդեաւ և Կարճկան

Այս չորս միացեալ լեռնամիջեայ գաւառների գաւառագլուխն է Եիհնիա և նրա կից Օղմանց գիւղերը։ Կարճկանց ծովափնեայ է, դիրքը լեռնային, անառիկ և առաջին աստիճանի ամուր։ Պատապարված է բարձր և կարծր ժայռերով, խոր և պատուականաւոր ձորերով և կիրճերով, աւելացնենք այս լաբիւրինթոսի վրա և խիտ անտառները, որոնք վարագոյրի պէս ծածկում են նրա բնական մարտկոցները, կը դառնայ մի ամրոց և աննուաճելի դիրք պաշտպանվողների համար։ Սրա ամրութիւնները գերազանցում են Ջուլամերկին։

Անտառները վայրի կենդանիներով լի է, մանաւանդ վայրենի խոզեր, որոնց բազմաթիւ երամակները վնասում են ամեն կողմ, բնակիչները, ոչ հայեր և ոչ քրդեր, չեն ուտում խոզի միս, դրա համար և բազմապատկվել է դրանց թիւ։ Մի ապխտագործ կարող է հարիւր հազարներ դիլել համարեա այդ պատրաստի դրամագլխից։

Կարճկանից է մատակարարվում Վանայ թէ չինութեան և թէ վառելու փայտն ու ածուխը։ Նրա ծովափնեայք աքանչելի են տեսարաններով. դժուար թէ աշխարհի որ և է մասը կարողանայ մրցել նրանց վայրենի և աննկուն գեղեցկութեան հետ։ Բնակիչները ամրակազմ և առոյգ են։ Վարուցանի հողերը թէև քիչ, բայց շատ արդիւնաբեր են։ Այս լեռների չղթան Տորոսի շարունակութիւնն է, որոնք հանքերով հարուստ են։ Գանվում է արծաթ, կապար, պղինձ, երկաթ, և դեռ ով գիտէ որքիչ ինչ հանքեր, որովհետև երկիրը անծանօթ է և քննված չէ։ Ընձակ գիւղի և ս. Յակովբ վանքի մէջ եղած տարածութեան վրա երկաթի հանքի հին բովատեղի կայ։ Կապարևայ հանքերից ծածուկ օգուտ են քաղում վանայ մի քանի դարբինները. Կեցանը ջաղացաքարի անուանի հանք ունի, որի քարերը մինչև քսան տարի կը դիմանան։ Այս գաւառները անսպառ հարստութիւն են պարունակում իրանց ծոցում, մանաւանդ կարճկան, որ իր անզուգական տեսարաններով, առատ բուսականութեամբ Հայաստանի Էէլվետիան է։ Այդ ամրակուռ և ինքնապաշտպան սարերին պակասում է մի Վիլհելմ-Թէլ նոր և անկախ Հելվետիա հիմնելու համար։ Կարճկան չատ նաւահանգիստներ ունի. գլխաւորներն են՝ Սորբ և Խնձորիս գիւղերինը։ Իսկ Դագվանը ամենամեծ նաւահանգիստն է Բաղիշոյ և Մշոյ առևտրական յարաբերութեանց վրա։

Գիւղերի թիւ	113
Հայոց թիւ	22,713
Բղդեր	4,668
Վարժարաններ	11
Եկեղեցիներ	70
Ուսումնարաններ	3
Աշակերտներ	246

Թիզանեան անուն ընկերութիւնը, եղեգիս գիւղի մէջ մի ուսումնարան է բացել։ «Միացեալ ընկերութիւնը» երկու ուսումնարան ունի, մին Կարճկանից և միւսը Դագվանայ մէջ։

12.

Ախլաթ

Ախլաթ հեռի է վանէն ցամաքային ճանապարհով 30 ժամ, ծովով $7\frac{1}{2}$։ Բաղիշոյ, Մշոյ, Բուլանխայ, Զևուրայ և Արծկէի մէջն է. գաւառագլուխն է կծվոկ գիւղը։ Մի մասը լեռնային է, իսկ ծովեզերեայք տարթ են։ Օդը բաւեխառն է, երկիրը ջրալի, հողն արդիւնաւէտ։ Ունի նաւահանգիստ։ Վաղաքը հին ժամանակում ծաղկած էր։ Արաբացոց տիրապետութեան օրերից գեղեցիկ չինվածքների աւերակներ են մնացել, քարափոր անոթ, գմբէթներ, եկեղեցիներ, սև, կարմիր քարերից չինած։ Այս տեսակ քարերի չերտեր տարածվում են մինչև Բաղէշ, Մշոյ դաշտ, Բուլանխներ և Մանազկերտ, որոնք չինվածքի համար դիւրատաշ և յարմար են։ Ցիշեալ գաւառների վանքերը, եկեղեցիք բոլորն այդ քարերից են չինված։ Այգեստանք պտղատու և լաւ մշակված են, մանաւանդ խաղողաբերին։ Ախլաթի, Մշոյ, Զուխուրայ և Բաղիշոյ մէջ մի ընդարձակ սարադաշտ կայ, որին տեղացիք Ռանվայ են անուանում։ Այնտեղ հոկտեմբերից մինչև մայիսի վերջերը անձրև մնում է ձիւնը։ Դրա մերկալից ճանապարհը շատ վտանգաւոր է անցուդարձ անողների համար։ Ձմեռները այդ անցքից դահուկով են անցնում լծված մարդիկներով։ Ռանվայի հիւսիսային կողմ բարձրանում է մի սուլուկով սար ծածկված մայառներով, դա անուանվում է Դրգուռ, կից սրան ցցված է Ներբովթ լեռը, որ իր փոքրիկ չղթան ձգում է մինչև Մշոյ դաշտը. Ներբովթ Դրգուռից բարձր է և իր գլուխը ցոյց է տալիս բոլոր ծովափնեայ գաւառներին։ Այս երկու սարերը ևս մարած հրաբուխներ են, որոնց, ինչպէս Հայաստանի բոլոր հրաբուխների մասին, պատմութիւնը ոչինչ չէ յիշում։ Ախլաթ գաւառի մէջն է Նպղիկայ լիճը մի կղզիկով, որի ջուրը քաղցր և ձկները համեղ են։

Գիւղերի Թիւ	88
Հայոց Թիւ	9,864
Թիւրքեր	1,100
Բղդեր Համանոցի ցեղի մի մաս	900

ՈՐՔԵՎ ՊԻ ԴՈՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս վերնագրով մի յօդուած ենք պատրաստել, որի մէջ պիտի ցոյց տանք, թէ ինչպիսի հոգատարութեան կարիք ունին մանր անասունները, որպէսզի կարենան ապրիլ ու բազմանալ։ Մենք կը խօսինք մանաւանդ այն մանր անասունների մասին, որոնք ընտանի են մեր գիւղերում, եւ որոնց մեծ մասը ոչնչացել է անխնամութեան պատճառով։ Մենք կը խօսինք ոչխարների, այծերի, խոզերի եւ հաւերի մասին։ Ամէն մի գիւղացի գիտէ, որ այդ անասունները մեծ օգուտ են բերում տնտեսութեան, եւ որ նրանց պահելը ոչ մի դժուարութիւն չի ներկայացնում։ Ամէն մի գիւղացի գիտէ, որ այդ անասունները շատ արագ են բազմանում, եւ որ նրանց պահելը ոչ մի մեծ ծախք չի պահանջ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՒՐՔԻԱ

Լրագիրները մեջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները: Հետագիրը հաղորդեց, որ մահուան պատժի դատապարտած սուլթանի փեսաները բաժանված են իրանց կանանցից: Այդ փաստից կարելի է եզրակացնել, որ սուլթան Աբդուլ-Ազիզի սպանողները կամ մահուան պատժի կենթարկվին, կամ կալանաւորված կը լինեն իրանց ամբողջ կեանքի ընթացքում և կամ թէ կաքսորվին: Ուրիշ անգամներում, երբ որ և է սուլթանի քոյրերի ամուսինները աքսորանքի են դատապարտվել, նրանց չեն բաժանել իրանց ամուսիններից: Դրանից երևում է, որ դատապարտեալների վիճակը շատ վատ է:

Դժուար է քննել Կ. Պօլսի դատարանի վճռի իրաւացիութիւնը: Դուրս այդ վճիռը հիմնված է կատարեալ հաստատ և ակներև փաստերի վրա, բայց դատաստանական գործը արդարութիւնը բաւականութիւն տալու և յանցանքը պատժելու համար չէ սկսված: Միահապ-փաշա և նրա համախոհները դատաստանի ենթարկվեցան քաղաքական պատճառներով: Սուլթանի այժմեան խորհրդատուները և բարեկամները հաւատացրել են նրան, որ նա անկարող է հանգիստ ճնալ իր գահի վրա, քանի որ կենդանի են Միհհատ և Մահմուդ-Դամադ փաշաների պէս մարդիկ և քանի որ նրանք միջոց ունեն պալատական դատարութիւններ կազմել: Զափագանց փառասէր Միհհատ-փաշա և չափազանց ագահ Մահմուդ-Դամադ-փաշա վտանգաւոր էին սուլթանի համար, որ չէր կամենում օգուտ քաղել նրանց ծառայութիւններից: Նրանք հնշտութեամբ կարող էին մի նոր յեղափոխութիւն անել և Աբդուլ-Համիդի համար նոյն վախճանը պատրաստել, որին ենթարկվեցաւ Հանդուգն սուլթանը: Դատապարտված վաճառների կարուսաը վաղուց վճռված էր և նրանց պատիժը անպատճառ կը կատարվի: Թիւրքիայի քաղաքական կեանքից այդ գործիչները անպատճառ կանհետանան և այդ կորուստը հաղիւ թէ մէկը ափսոսայ:

Աբդուլ-Ազիզի դատաստանական գործի վրա պէտք է այս իսկ տեսակէտից նայել: Անձնականապէս դատապարտված այդ պալատականները ոչ ոքի համար հետաքրքիր չեն: Նրանք չափազանց մեծ չարիք պատճառեցին Թիւրքիային, որ նշանաւոր ազգեցութիւն ունեցաւ Եւրոպայի քաղաքական կեանքի վրա 1876 թուից մինչև այդ մարդկերանց անկումը: Նրանց կորուստը մասամբ կը հանգստացնէ Եւրոպային: Վերջնականապէս հանգստացած սուլթանը միջոց կունենայ զբաղվել իր երկրի գործերով և գուցէ իր խորհրդատուներից այնպիսի մի մարդ կընտրէ, որ ընդունակ կը լինի կարգի բերել Թիւրքիայի խառնված գործերը: Երբ Աբդուլ-Ազիզը հանգիստ է լինում, եւրոպական պետութիւնները էլ կարողանում են իրանց միջազգային գործերին աւելի ժամանակ նուիրել և պաշտպանել իրանց շահերը:

ՖՐԱՆՍԻԱ

Պատերազմական մինիստրը կարգադրեց, որ ամրոցների շինութիւններին ոչ ոք չներկայ չը գանվի բացի աշխատողներից և Ֆրանսիական օֆիցերներից: Օտարները պէտք է առանձին թոյլատուութիւն ստանան պատերազմական մինիստրից: „Հասարակ ընկերութիւնը“ սպել է հետևեալ հաղորդութիւնը: Տրիպօլիի թիւրքաց նոր նահանգապետ Նագիֆ-փաշա, հասնելով Տրիպօլի հէնց առաջին օրից զբաղվեցաւ պատերազմական ոյժերի կազմակերպութեամբ: Նա զօրաթաղ է կատարում մինչև անգամ Ֆրանսիական հիւպատոսի տան առաջ: Պատերազմական այդ պատրաստութիւնները առիթ են տալիս Տունիսի մէջ բնակվող ցեղերին ապստամբական ցոյցեր անել: Տրիպօլի ուղարկված թիւրքաց զօրքերը բազմաթիւ չեն, բայց արաբները լուր են տարածում, որ նրանց թիւը հասնում է 50,000: Այդ զօրքերը, ինչպէս հաւատացնում են արաբները, պէտք է գրաւեն ոչ թէ միայն Տունիսը, այլ և Ալժիրիան և այդ տեղերից պէտք է արտաքսեն Ֆրանսիացիներին: Նագիֆ-փաշա բացի այդ կազմակերպում է անհանօծ օգնական զօրքեր օազիսների և անապատների մէջ բնակվող ցեղերից: Նորերումս նա մեծ զօրախաղ կատարեց, որին մասնակցեցին թիւրքաց կանոնաւոր և արաբներից կազմված օգնական զօրքերը: Տրիպօլիի մէջ կատարվող պատրաստութիւններից երևում է, որ թիւրքիան մտադիր է չը թոյլ տալ Ֆրանսիայի գերիշխանութիւնը Տունիսի վրա: Թիւրքաց նահանգապետը հրաժարվեցաւ հետևել Տունիսի և Ֆրանսիայի մէջ կապված պայմանագրութեան պայմաններին տունիսցիների հետ յարաբերութիւններ ունենալու ժամանակ: Այդ պատճառով Ֆրանսիական հիւպատոսի դրութիւնը Տրիպօլիի մէջ չափազանց դժուար է:

Հանրապետականները մինչև այժմ ուշադրութիւն չէին գարձնում Ալժիրիայի կառավարիչ Ալբեր Գրեվիի դէմ յարուցված գանգատների վրա: Ալբեր Գրեվի նշանակվեցաւ Ալժիրիայի կառավարիչ հանրապետականների ցանկութեան համեմատ, իսկ նրա հակառակորդները յետադիմականներն էին: Այդքանը հանրապետականների համար բաւական էր և նրանք ուշադրութիւն չէին գարձնում Ալժիրիայի կառավարչի թեմի գործունէութեան վրա:

Այժմ հանգամանքները փոխվել են: Հանրապետական կուսակցութիւնը բաժանվել է երկու մասերի, որոնք մի քանի տարիների քննութեան ժամանակ միմեանց ընդդիմադրում են և որոնցից մէկը գամբետտայի կուսակիցներից է կազմված, իսկ միւսը Գրեվիի բարեկամներից: Գամբետտայի կուսակիցները ամեն մի դէպքից օգուտ են քաղում իրանց հակառակորդներին մի անբաւականութիւն պատճառելու համար: Ալժիրիայի մէջ պատահած անցքերը մեծ առաւելութիւն են տալիս գամբետտայի կողմնակիցներին և նրանք մի արշաւանք են սկսել Ժիւլ Ֆերրիի մինիստրութեան դէմ:

Եթէ Ալժիրիայի մէջ պատահող վերջդմնանքները և անկարգութիւնները շուտով չը վերջանան, պատգամաւորների ապագայ ընտրութիւնների ժամանակ գամբետտան իր ձեռքին մի նշանաւոր զէնք կունենայ, որի օգնութեամբ նա կարող է յաղթել իր հակառակորդներին:

ԻՏԱԼԻԱ

Պահպանողական կուսակցութեան մի քանի նշանաւոր անդամները, ի նկատի առնելով Վեսպրեամի միջնադարեան անկման անհրաժեշտութիւնը, դիմեցին Սկլաւային 130 պատգամաւորներից ստորագրված մի հեռագրով, որի մէջ նրանք գանգատվում են այժմեան միջնադարեան կրկնոտ վարմունքից Ֆրանսիայի վերաբերութեամբ: Պալերմոյի մէջ ժողովրդական ցոյցերի ժամանակ ամբոխը կանչում էր „Թող կորչի անընդունակ միջնադարեան, թող կորչեն գամբետտայի կոզմնակիցները“: „Riforma“ լրագիրը խիստ քննութեան ենթարկեց արտաքին գործերի միջնադարից պարլամենտին տուած մեկնութիւնը Մարսելի մէջ պատահած անցքերի վերաբերութեամբ: Լրագիրը պնդում է, որ Մարսելի մէջ սպանված իտալացիների թիւը կառավարութիւնը փոքրացնում է Ֆրանսային հաճոյանալու համար: Վենետիկի և մի քանի այլ փոքրիկ քաղաքների մէջ Ֆրանսիայի դէմ ցոյցեր են պատահել, որոնք խաղաղութեամբ են վերջացել: Վենետիկի մէջ շատ մարդիկ են կալանաւորված:

Իտալական պարլամենտը ընդունեց ընտրողական օրինագիծը 202 ձայների մեծամասնութեամբ 116-ի դէմ: Իտալական գեսպանը Փարիզի մէջ հրաժարվեցաւ իր պաշտօնից: Նա կը վերադառնայ Իտալիա, որտեղ կը հրատարակէ իր զրպարտութիւնը իտալական կառավարութեան հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

ԱԼԺԻՐ, 30 յունիսի: Բու-Ամեմ 1000 արաբներից բաղկացած զօրաթաժնով յունիսի 26-ին երեք անգամ անաջող կերպով յարձակվեցաւ կրէյսների վրա (նաւ), որ պաշտպանում էր երեք խումբ հրացանաձիգներ: Ապստամբները փախան կորցնելով 250 մարդ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

19	Կարիանցիք	150	900
20	Մամասաբերանցիք	100	600
21	Սարկանցիք	150	900
22	Շիտանցիք	150	900
23	Յարըկցիք	500	3000
24	Ուշանցիք Եզեդիք	160	960
25	Հաւերցիք—Հզիդիք	400	2400
	Գումար	5010	28,440
	Պարսկաստանի սահմանագլխից եկողներ		
26	Մակուրցիք	300	2100
27	Թակուրցիք	150	950
38	Շամասցիք	400	2800
29	Մլանցիք	100	700
30	Շկակ	150	1800
31	Հէյատարանցիք	200	1400
32	Լվեցիք	100	500
33	Եզիդիք	350	2500
	Գումար	1750	12,750
	Վասպուրական նահանգի հետ առնչվող Բուլանըխներ, Մահազկերտ և Խնուս գաւառները հայերի ամբողջ թիւն է		314,101
	Վասպուրական նահանգի հայոց թիւը առանձին		249,361
	Օտար ցեղեր բոլորը միասին		150,729
	Ասորիներ		86,368
	Քրդեր		51,828
	Թիւրքեր		13,964
	Եզիդիք		7760
	Հրէաներ		809
	Մահմետական կրօնին պատկանող ազգեր		65,792
	Քրիստոնեաներ		100,469
	Բոլոր ազգերը միասին		474,730

(Կը շարունակվի)

մասերը և մնացեալները խաչինք և ընտիր նրժոյգներ:

Հաւիվանք անուն զեղեցիկ և երկարաձիգ հովիտը ճանապարհորդի հիացումն է գրաւում, որի մէկ ծայրը Ալաչկերտի սահմանից է սկսվում: Արան կարելի է անուանել Եփրատայ հովիտ: Արա միջէն ծանրագնաց լայնածաւալ հոսում է Եփրատը իր ծոցն ընդունելով Մահազկերտի և Խնուսայ գետերը:

Եփրատը չրջում է երկու Բուլանըխների մէջ, ճեղքելով Զայթօխուրայ նեղ ձորերը և կիրճերը՝ իջնում է Մշոյ ընդարձակ դաշտը: Հաւիվանուս հովտում Հասնանցի քրդեր են ապրում մօտ 250 վրան: Նրա մի փոքրիկ մասն է միայն հայոց ձեռքում: Մահազկերտը կարող է մօտ 3000 ընտանիք զաղթական ընդունել:

Մօտ տարիներում չէրքէզներից և Կարսի զաղթականներից 200 տուն բնակեցրին Մահազկերտում և ներքին Բուլանըխում, որոնց հետ քրդերը խիստ թշնամութեամբ են վարվում:

Ալիրաթ քրդերից հասնանցիք կը բնակվեն Մահազկերտում և ներքին Բուլանըխում, իսկ ծիրրանցիք և սէյրանցոց մի մասը, մօտ 150 վրան, կը բնակեն ներքին Բուլանըխում:

Երկու Բուլանըխներ զատող Բլէջան լեռը անտառուտ է և հինաւուրց բերդերի և չինութեանց աւերակներ ունի իր վրա: Բլէջանի ստորոտում դէպի Կոփ գիւղը մի լճակ կայ, խաչուայ ծով անուն, ջուրը քաղցր է և մանր ձկներով լիք: Ներքինից վտակ դուրս գալով պատացնում ջրաղացները և ոռոգում է գիւղերը:

Այս երեք գաւառների գուռ հայարնակ և քրդերի հետ խառն գիւղերի թիւն է . . . 159

Հայերի թիւ	34,864
Վարժարաններ	14
Աշակերտներ	2616

Կոփայ վանքի մէջ Միացեալ ընկերութիւնը, 20 աշակերտի համար, մի դիշերօթիկ ուսումնարան է բացել:

Բնակիչները լաւ հայեր են, ազգային պայծառ ապագային համար հոգի և կեանք նուիրող և նրա յաւուրձն ապրող:

16.

Խ ն ո ւ ս

Խնուսը վարդոյն, Բասենու, Մանազկերտի, վերին և ներքին Բուլանըխների մէջն է, դիրքը լեռնային է, ունի ընտիր դաշտային մասեր: Ջուրն առատ, օդը զով և անուշահոտ, հողն արգաւանդ: Գաւառագլուխն է Խնուսայ ընդդը, Խնուսը առաջին մարդոց. Ադամայ և Եւայի հայրենիք, բնակարանն է կարծվում, որին տուրը Գիրքը դրախտ է անուանում: Խնուսայ գետը Բիւրակնեան լեռներից բղխում է և ոռոգելով չատ գիւղեր Գարաչօրան գիւղի առաջին կամրջի Բուլանըխ և կը խառնվի Եփրատին: Երասխի աղբիւրներն ևս այս գաւառի Բիւրակնեան լեռներն բղխում են, որ մի մեծ վտակ գառնալով, Թաթոս գիւղի մօտէն իջնում է դէպի Քիլլիս և Մէճիտիէ գիւղեր և անցնում է Բասենու:

Այս գաւառի բոլոր լեռները նշանաւոր են իրանց առատ և բարեհամ ջրերով և արօտներով: Բիւրակնեան լեռները իրաւունքով կարելի է Հայաստանի բոլոր լեռանց թագուհին անուանել: Բիւրաւոր խաշինք, անդեակք և նժոյգներ արածում են նրանց վրա. բիւրաւոր թափանցիկ վտակներ, աղբիւրներ խոխոջում են նրանց կողերի վրա: Անթիւ գոյնզգոյն սիրուն թռչունների տեսակները ճլվլում են նրանց չուրջը: Բիւրաւոր և դեռ անծանօթ ծաղիկների հազարագոյն տեսակներ զարդարում են նրանց գլուխը, կուրծքը, թևերը և անմահական հոտով անուշացնում են նրանց պայծառ միջավայրը: Եւ այս ամենը յիշեցնում են հինաւուրց Եդեմ: Հնագոյն չինութիւնների դերբուհիներ սփռված են բոլոր այս գաւառում: Բնակիչները առոյգ, յաղթանդամ և գեղեցիկ են:

Հայարնակ գիւղերի թիւն է 132

Հայերի թիւ	19,827
Բիւրդեր	7056

Զիլանցոց այիրաթ, Տանանցոց և Ջիբրանցոց մի մասը: Այստեղ բնակվում են 80 տուն չէրքէզներ և Զազա կամ Տմբղիկ կոչված սակաւաթիւ և խեղճ քրդերը: Խնուս կարող է իր մէջ 1000 ընտանիք զաղթական ընդունել:

Վարժարաններ	8
Աշակերտներ	296

Վ Ա Ր Ջ

Աչիրէթ կամ թափառական քրդերի ցեղերը երկու մասի են բաժանվում. մի մասը որ Մուսալայ և Տիգրանակերտի կողմերից գալիս են գարնան և ամռանը Մոկաց, Շատախու և Նօրատուզայ կողմերը. միւս մասը Պարսկաստանի սահմանագլխից կը տարածվին Աբազայի դաշտի վրա Ադրակի և Խօշաբայ կողմերը:

Տիգրանակերտի կողմից եկող Աչիրէթների անունները և թիւը:

	Ցեղանունք	վրան	անձինք
1	Շէֆանցիք	200	1200
2	Մամհանցինք	150	900
3	Սէյտանցիք	60	300
4	Ջեկանցիք	100	600
5	Արտօչցիք	250	1500
6	Յաջանցիք	200	800
7	Դէվանցիք	100	600
8	Սիւկանցիք	150	900
9	Մամուչանցիք	250	1500
10	Կճանցիք	350	2100
11	Խէրկանցիք	140	840
12	Տահանցիք	250	1500
13	Բալհանցիք	50	300
14	Բախեանցիք	150	900
15	Կալհանցիք	200	1200
16	Միրանցիք	300	1800
17	Ալկանցիք	200	1200
18	Տիտէրցիք	300	1800